ԼԵՆԻՆԸ ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻ ՄԵԶ.

Գյուղում Լենի. 1920 թ. նոյեմբերի 13.ին կաշինո գյուղն ու հանգիստում իրարանցումի մեջ եր։ Հետեւյալ որը տեղի ու գյուղացիներին պիտի ունենար ելեկարական կալարանի հանութին։ Դիսավոր բացումը, այդ պատճառով ել սովորական կյանքը մի կողմ եր մնացել։

Գյուղի ամենալավ ու ընդարձակ տան մեջ ճաշկերույթի պատրաստություններ եյին տեսնվում։

Դանվեցին մասնագետներ, վորոնք սկսեցին պատրաստել գյուղական գարեջուր, դոնդող (ստուծ) և գյուղացիական ճաշկի սովորական տեսակները։

Աւենքն ել պատրաստվում եյին փարթամորեն տոնել այդ գեղը և սպասում եյին նշանավոր մեկ մարդու։

Յերեկվա ժամը յերեքն ե։ Խրճիթի մոտ խոնված մարդիկ չեյին ել կարծում, թե Իլյիչը կարող ե գալ։

— Յես, — պատմում ե ականատես Թեոփանովը, — կանգնեցրի լուսանկարչական գործիքս ու սկսեցի պատրաստություններ տեսնել։ Հանկարծ արագությամբ տանը մոտենում ե մի գուակ ավտոմոբիլ. յերեսում եր, վոր գավառից չի գալիս։ Աւենքն իր տարբեր յենթադրությունն եր անում։ Վազելով մատենում ե ինձ լուսբաժնի վարիչ Սիներ։ Յես նայեցի նրան ու շիմացա, թե ինչ ե պատահել նրան։ Թռչելուում ե, ինչ-վոր քան ե ուղում ասել, բայց չգիտե, թե ինչ ասի։ Դեմքին ու ըախության ժպիտ, աչքերը շլացած։ Ուսիցս բոնեց ու գոչեց Իլյիչն ե յեկել։

Վազեց խրճիթ։ Յես ել բակի կողմից վազեցի, յետին մուռաքով, վորովնետե բացման նախորյակին գեռ յես բոլոր մուռաքերն իմացա։ Ներս եմ վազում խրճիթ։ Քաղաքից յեկած լարավոր յերաժշտախումբը նվազում ե ինտերնացիոնալը։ Դան կողքին կանգնած ե ամբակազմ ու թիկնավետ Իլյիչը, վոր առաջին հայացքից թվաց թե խիստ ու լուրջ գեմք ունի, իսկ լավ զննելուց հետո՝ սիրալիր ու բարի։ Կանգնած եր Իլյիչը ու լաբարաց, հասարակ մորթե վերարկուն հագին, աջ վոտքի

կրկնակոշիկը պատռված և ձեռքին բռնել եր ականջավոր թթ
զլխարկը:

Իւկ նրա կողքին կանգնած եր նադեժդա կոնստանտինով՝
համաձեռնություններից հազին, ձմեռային սպիտակ
զլխարկը գլխին ու ձեռնամուշտակը (մոֆտա) ձեռքին:

Լարավոր յերտ ժշտախումբը վերջացրեց նվազը:

Գյուղացիները մոտ վազեցին իլյիչին, ցանկանալով ծառա-
յություն մատուցել ու ոգնել նրան մուշտակը հանելու:

— Վոչինչ, վոչինչ, յես ինքս կհանեմ, — ասաց իլյիչը, և
նրա խոսքերում այնպիսի հաստատակամություն կար, վոր վոչ-
վոք չհամալ ձակվեց նրան հակառակել:

Իլյիչը հանեց մուշտակը ու մնաց իր մոխրագույն հնամաշ
հազուսատով: Ոգնեց նադեժդա կոնստանտինովային ու մահ-
ճակալի մոտ զտնված մեխից կախեց նրա վերաբկուն ու թթ
մուշտակը:

Ներկայանալով յուրաքանչյուրին, իլյիչը սեղմում եր
նրանց ձեռքը և իպատասխան ասած սղզանունին ասում.

— Ույանով լենին:

Իլյիչին մոտ հրավիրեցին գյուղական սեղանին: Նա նստեց
գյուղացիների ու Վոլոկոլամսկի ներկայացուցիչների կողքին՝
հայացը ուղղած գեպի լուսամուտը:

Մնացածներն աշխատում եյին նրան ավելի մոտենալ:
«Իլյիչին հանդիպելու ժամանակ մենք քար կտրեցինք, —
վերիշում էն գյուղացիները, — զողում եյինք ուրախությունից
բայց սեղանի շուրջը նստած ժամանակ մենք արդեն իլյիչից
չերինք ձնշվում, հոր պես սիրում եյինք նրան: Կարծես յեր-
կար ժամանակ միասին ելինք ապրելու»:

Իլյիչն առաջարկեցին ճաշակել գյուղական գոնդը,

Գյուղացի Դմիտրիյ Ռոդինովը նրան ու նադեժդա կոն-
ստանտինովային մատուցարանով միմի բաժակ գյուղական գա-
րեջուր մոտ բերեց:

Լենինը հարցրեց.

— Հո հարբեցնող չի:

Յեկերը իմացավ, վոր հալբեցնող չի, չըխկացրեց բաժակը

Ռոդինովի հետ ու խմեց: Իլյիչը շատ քիչ կերավ: Ճաշելու
հրավերը ու բոլոր ծառայություններից հրաժարվում եր:

— Յես մեկնելուց առաջ նախաձաշել եմ և ընդհանրա-
պես յես շատ քիչ եմ ուտում, — ասում եր նա:

Թե ին, եր խո- Սեղանի շուրջը նստած ժամանակ իլյիչն ամե-
սում լենինը նից շատ գյուղացի Ռոդինովի հետ եր խո-
զուղացիների սակցում, վորը առաջ տնայնագործ եր ու մի-
հետ:

փոքրիկ դարբնոց ուներ:

Իլյիչը խոսում եր նաև ուրիշների հետ, և վորպեսվի նրանք
խոսակցությունը շարունակեն ու միանգամայն շիտակ լինեն,
շարունակ կրկնում եր նայելով ուղիղ նրանց յերեսին.

— Հապա հետոն, հետոն:

Իլյիչի աչքերը լուրջ եյին ու միաժամանակ կրակոտ
ժպանով լի:

Կարծես աշխատում եյին տեղեկանալ՝

— Հապա մի ասա, թե ինչ եւ:

Ռոդինովը չհամարձակվեց մանրամասն պատմել, թե
առաջներում ինչ ե ունեցել:

«Բուրժուա» կոչումը, վոր յուրահատուկ կերպով հասկա-
ցել եյին գյուղացիները, արգելում եր նրան անկեղծ լինել:
Նրբամիտ իլյիչը նկատեց այդ ու ասաց նրան.

— Դե, զուք ինչ կապիտալիստ եք: Միթե մենք այդպիսի
կապիտալիստների դեմ ենք կովում:

Մթնում եր:

Հարկ յեղագ ժողովել գյուղացիներին: Յերբ լուսանկարիչը
հայտնեց նրանց, թե հիմա իլյիչի հետ միասին պիտի նկարվեն,
խրճիթի մոտ կանգնած ամբողջ խումբը վազեց աթոռներ ու
նստարաններ բերելու:

Ամենքն ել ուղում եյին թեկուղ մեկ ըովե կանգնել իլյիչի
կողքին:

Շուտով ամբողջ գյուղը, ծեր ու ջանել, հալաքվեց ու
տեղափորվեց:

Կաշինոյի գյուղացիների միջև շատ յեկվորներ ել կային:

Միքանի ըովելից հետո արդեն իլյիչը նստեց գյուղա-
ցիների միջև՝ նադեժդա կոնստանտինովայի կողքին:

ԱԵՅԻՆ յեզ Յերեխաներն իրար բոթելով աշխատում եյին
մանակները. մոտիկ նստել էրենց իլիչին, խոնվել նրա վու-
քերի շուրջը:

Նրանց նստեցնելու վրա շատ ժամանակ գնաց:

Իլիչն ինքն եր նստեցնում նրանց, փաղաքում գլուխներն
ու ծիծաղում:

Նկատելով, վոր յերկար ե տեսում պատրաստվելու և նստե-
ցնելու գործը, նա հանաքով լուսանկարչին ասաց:

— Բնկեր, յերեխաներին կմըսեցնեք:

Թեոփանովը պատասխանեց.

— Վոչինչ, Վլադիմիր Իլյիչ, նրանք պինդ են, կղիմանան:
Իլիչը ժպտաց:

Հենց այդպես, Կաշինո գյուղացիների համար ընդմիշտ
թանգարին այդ ժպտով ել դուրս յեկավ նա նկարի մեջ:

Իլիչին հայանի յեր, վոր յերիտասարդ սերունդը ամրա-
կազմ ե: Այդ ծանր տարիներին ամենքից շատ նրա սիրտն եր
ցավում յերեխաների համար, բայց նա գիտեր, վոր նրանք
ամեն զրկանք կտանեն:

Իլիչը կը կին խլ ճլթ մտավ, մնաց ախտեղ վոչ ավել քան
հինդ ըոպե և ապա բոլոր գյուղացիների հետ միասին դիմեց
դեպի գյուղի միջև շինած ամրիոնը, վոր գտնվում եր ելեկտրա-
կանության հաղորդիչ թելերի սյունի մոտ:

Այդ սյունը մինչև հիմա յել դեռ կա, և յերբ գյուղացի-
ներն անցնում են նրա մոտով, հիշում են իրենց թանգարին
հյուրին:

Փողոցում յերեխաները շըջապատում եյին Իլիչին ու բըռ-
նում նրա ձեռքը:

Ամբողջ ճանապարհին նա նրանց հետ խոսակցում եր ու
հարցնում:

— Ի՞նչպես եք սովորում: Կը ո՞ն հո չե՞ն սովորեցնում:

Ու ծիծաղում եր նրանց հետ միասին, հաճախ կը կնելով.

— Այ, սրանք ապագա կոմմունիստներ են:

Ռողիոնովին նա ասաց.

— Բնկ. Ռողիոնով, հազար ի՞նչպես եյիք դուք ասում, թե

ձեզ մոտ ամեն ինչ մաշվել-պըծել ե: Իսկ յես ահա տեսն ում
եմ, վոր ձեր գյուղացիներն որինավոր կերպով հագնված են:
— Հնուց մնացած բաներ են, Վլադիմիր Իլյիչ: Ով ինչ
ունեցել ե, են ել հագել ե:

Ճանապարհին, գեղի ամբիոն գնալիս, գեղջկուհիները մի-
մանց հետ խոսում եյին ու փեշներին խփում:

— Այ, ասում եյին, թե Լենինը կոպիտ ե, բիրտ, իսկ մի
տես՝ ինչքան լավ մարդ ե յեղած: Իմ տղային ուզում եր իրեն
ավելի ու ավելի մոտ նստեցնել:

— Զարմանալի բան ե,—ավելացնում ելին գյուղացիները,—
այդպիսի մարդ ե, բայց վոչ վոսկի մատանի ունի, վոչ շղթա
և վոչ ել վոսկե ժամացույց... զարմանալի յե:

Նաղեժդա Կոնստանտինովսայի կողքով գնում եր Յարոպոլեց
գյուղի բանիմաց մի գյուղացի ու ամեն կերպ թախանձում եր,
վորպեսզի Իլյիչը նրանց մոտ գնար:

— Մեր գյուղը որինակելի յե... Հեռու յել չի... Ճանա-
պարհը լավ...

ԱԵՅԻՆ գյուղի Հասանք միտինգի տեղը:

Միտինգում. Միտինգը բացեց Դմիտրիի Ռողիոնովը վող-
ջունի խոսքով ու թղթին նայելով մի ճառ ասեց:

Ռողիոնովը խոսում եր այն մասին, թե միայն խորհրդա-
ցին իշխանությունը հնարավորություն տվեց գյուղացիներին,
վոր իրենց խրճիթները «անբնական լույսը» բերեն, և վոր այդ
լույսը նրանց վոչ միայն գիշերային խավարից կազատի, այլև
ճիշտ ճանապարհի վրա դուրս կբերի:

— Յարական կառավարության որոք մենք յերազել կա-
րող եյինք միայն: Հեղափոխության շնորհիվ մենք նպատակնիս
հասանք.

— Գիտությունն ապակե սրվակի մեջ պինդ վակել ե խա-
վարը և մեզ համեցեք ե անում ուրախանալու:

Ռողիոնովի խիզախ ու լավ հորինած ճառը Իլիչին դուք
յեկավ: Նա մլուսների հետ միասին ծափանարեց նրան:

1920 թվի դեկտեմբերի 11 ին Սերգեյ Կուրկովը ընկ. Լ.
Ֆոտիկայից մի նամակ ստացավ, ուր ասված եր.

«Վլաղիմիր Իլիչը շատ շնորհակալ ե ձեր ուղարկած նկարի համար և խնդրում ե ճարել իրեն համար այն ընկերոջ ճառը, վորը նկարված ե Նադեժդա Կոնստանտինովնայի կողքին. Խորհուրդների համագումարին նա այդ ճառից մեջբերումներպիտի անի»:

Ռոդիոնովի ճառի ժամանակ Լենինը կանգնած եր յերեխաների մեջ, հետո բարձրացավ ամբիոն, վոր գյուղացիական հասարակ մի սեղան եր:

Իլիչն ամենքին ել յերկում եր:

Հանեց գլխարկը ու, շնորհակալություն հայտնելով սիրակը ընդունելության համար, սկսեց.

— Ընկեր գյուղացիներ, ելեկտրականության նշանակության մասին յես կխոսեմ վերջում, բայց ամենից առաջ թույլ տվեք ձեզ ուրախություն պատճ սոել:

— «Հենց հիմա յես տեղեկություն ստացա, վոր ֆրոնտում մեր գործերը շատ բարեհաջող ընթացք ունեն:

«Մի շաբաթից հետո այլևս չի լինի վրանգելը:

«Այդ բանը մենք վորոշակի գիտենք ու ընդգծում ենք՝ (իլիչը որորվելով, ընդգծում եր մերթ աչ, մերթ ձախ ձեռքով՝ Այդ շաբաթմանը ոգնում եյին, վոր նրա պարզ ու մտածված խոսքերը թափանցեն գյուղացիական ուղեղի ամենախորքը, Սլյանի պատճառն արդյոք, վոր Կաշինոյի գյուղացիներն իլիչի խոսածից շատ բան հիմա յել համարյա խոսք առ խոսք հիշում են):

Ֆրոնտի գործերի բարեհաջող լինելու տեղեկությունը ուրախության բուռն պողոթկում առաջացրեց:

Գյուղացիները յերկարատև ու անլուելի «ուռա» գոչեցին ու ողնիվեր նետեցին գառան մորթուց կարած իրենց գլխարկները:

Լոեցին:

Իլիչը շարունակեց.

— Լեհաստանի հետ կհաշտվենք: Այդ բանը մենք ձեռք կբերենք:

«Մենք զիտենք, թե ինչ բան ձեռնտու յե կալվածատերեւ բին ու ինչ բան ձեռնտու չի գյուղացիներին,

«Մեզ խաղաղություն ե հարկավոր, վորպեսզի մեր վերքերը բուժենք, վորպեսզի սկսենք գյուղացիական տնտեսության շինարարության գործը:

«Մինչև վոր մեր թշնամիների հետ հաշիվներս չմաքնենք, այդ գործը չենք կարող անել:

«Դուք տեսնում եք ահա, վոր գյուղը՝ կաշինոն ելեկտրականություն ե անցկացնում: Բայց մեզ համար կտրենո՞ն այն ե, վորպեսզի մեր ամբողջ յերկրում այսպիսի լույս սփռվի:

«Խորհրդացին իշխանությունն այժմ ելեկտրիֆիկացիայի նախագիծն ե մշակում, ելեկտրականությունը կմշակի ու կպարարտացնի մեր հողը, կփոխադրի մեզ մի տեղից մյուս տեղը»:

Կրկին «ուռա», գլխարկների նետում, ինտերնացիոնալ:

Գյուղացիների ցուց տված այս վերաբերմունքից իլիչը շատ զգացվեց ու յերկրորդ անգամ ամբիոն բարձրացավ:

— Ձեզ հետ արդեն ծանոթացանք: Ամառս մի կերպ ձեզ մոտ կզամ ու կապրեմ ձեզ մոտ ավելի յերկար ժամանակ:

— Այդ խոսքերի վրա մեր ձեռքերը ծափ տալուց հոգնեցին, — պատմում ե Ռոդիոնովը, — վոչվոք չեր կարող յենթագրել, վոր կառավարության զլուխը, ինքը Լենինն այդքան պարզ ու զգայուն մարդ ե յեղել, կարծես թե մենք նրան շատ տարիներ եյինք լսել, շատ տարիներ հետն ապրել:

Իլիչի ճառը մտածված եր ու կրակոտ, բայց հակիրճ:

Նա շտապում եր Մոսկվա մեկնել ինչ-վոր ժողովի համեմու համար և դժվարությամբ համաձայնեց Յարոպոլեց գյուղը գնալ:

Ավտոմոբիլը նստելիս իլիչը միքանիսին խնդրեց, վոր իր մոտ կրեմլ գնան, խնդրեց նաև, վոր լուսանկարները հետնելը վերցնեն ու մնաս բարով ասելով, մեկնեց:

Ավտոմոբիլն արագ շարժվեց:

Լենինի հան- Յարոպոլեց գյուղի ճանապարհին, յերբ արդեն գիպելուց հետո. բոլորովին մութն եր, յերեխաները հսկում ելինք թե յերբ ե վերադառնալու իրենց իլիչը, ու յերբ տեսան ալ-

տոմորիլը, զիմավորեցին նրան «ուռայով» և հետո լացակումած «Լենինը զնաց» ասելով վաղեցին դեպի իրամիթները:

Նույն տաճը, ուր կանգ եր առել իւյիչը, ճաշկերույթ սարքվեց:
Գյուղացիները յերգեր եյին յերգում, ծիծաղում եյին ու
զվարձանում: Նրանք շատ ելին ցանկանում յերգել հեղափոխա-
կան յերգեր, բայց վորովհետև սեծամասնությունը խոսքերը
չփառեր, յերգի փոխարեն ստացվում եր կատարյալ մի բառան-
չոց: Բայց այդ բառանչոցը նույնիսկ շատ ավելի բան եր ասում
նրանց մեջ զարթնած ուժի ու դեպի իրենց առաջնորդն ունե-
ցած սիրո մասին:

Սերգեյ կուրկովին ուղղակի փիտեցին:

— Սերյոժա, մի մոտ արի... Այ թե վօնց մեծացավ, ախր
ասում ելինք, վոր քեզանից բան դուրս կդա: Մրի մի քեզ պաշեմ:

— Ախր մարդի տղեն մտածել ե, թե ում հրավիրի մեզ մոտ:

— Գիտեյինք, վոր դու մարդ կդառնաս:

Ընդարձակ ու մաքուր խրճիթի պատերն անկյունեանկյուն
ամբողջապես եժանագին ու անտաշ նկարներ եյին կպցրած:

Այստեղ կպցրած եյին նույնպես սուրբ Գևորգի նկարները՝
թե թագը զլիին և թա անթագ, մի խոսքով՝ իր բոլոր տեսքերով:
Գյուղացիներն ասում եյին.

— Գևորգին պիտի դեն զցել: Այստեղ իւյիչի պատկերը
պիտի կախել: Իսկ աթոռը, սեղանը և այն ամանեղենը, վորից
նա խմել ու կերել ե, — այդ բոլորը պիտի պահել:

Կաշինո գյուղի գյուղացիներն այժմ ել նույնիսկ իւյիչի
գալստյան վերաբերմամբ զանազան մանրամասնություններ են
հիշում:

Նրանք ամենքին պատմում են, թե ինչպես իւյիչն ինքը
նստեցնում եր վատ հագնված ու կեղտոտ գյուղական յերե-
խաներին, թե ինչպես ամբողջ ժամանակ նրանց հետ կատակ-
ներ եր անում, իսկ նկարվելուց առաջ խրատում, թե ինչպես
իրենց պիտի պահեն ու պատվիրում, վոր լուսանկարչական
գործիքի սկ կետին նայեն, չծիծաղեն ու չշարժվեն, վորը և
յերեխաները պատվով կատարեցին:

Մինչև իւյիչի գալը գյուղացիներն իրար մեջ խոսում եյին.

«Ե՞ս, չի գա, նա շատ զբաղված ե, և մեկ ել վծրտեղ ե
տեսնված, վոր պետության զլումը շրջի խուլ գյուղերը ու
զրուցի հասարակ գեղջուկների հետ»:

«Ախր նրան կարող են նույնիսկ սպանել: Այ, Մոսկվայում
նա ինչ-վոր գործարան գնաց, ու այնտեղ ել նրան վիրավորեցին»:

«Իսկ ինչու համար զլուխն իզուր շառով տա, — ախր նրան-
պիտի խնայել, նա մեր Հանրապետության համար հարկավոր
մարդ ե»:

Սակայն ամենքն ել շատ զարմացած եյին, յերբ տեսան
վլաղիմիր իւյիչին նադեժդա կոնստանտինովսայի հետ միասին
առանց վորկե պաշտպանության, թնդանոթների ու գնդացիների:

Թե ի՞նչի մասին կաշինո գնացած ժամանակ գյուղացիների հետ
հարցուփորա

իլլիչը զրուցում եր նրանց կարիքների մասին:
առաջ իւլիսը Նրա վրա մեծ տպագորություն թողեցին գյու-
զուղացիներին:

զացիների հետ ունեցած զրուցներն ու նրանց
պարզ ու անկեղծ պատմվածքները այն ժամանակ կատարվող
պարենմանատրումի մասին:

Պարենմասնա- Գյուղացիներն ասում եյին, վոր մասնատրումն
երումի մասին. ինքը այնքան ել ծանր չի, բայց վախեցնում
ե նրանց:

«Վլաղիմիր իլլիչ, ապրում ենք անհայտության մեջ: Այսին-
քանի սպասում ենք, իսկ ամենից շատ խուզարկությունների»:

«Ստիպված ենք վոչ միայն հացը թաղցնել, այլև մեր
ունեցվածքը, վոչ միայն ավելորդ մնացածները, այլև մեր ամենա-
անհրաժեշտ բաները, թեպետև գիտենք, վոր այդ ամենին
չեն լիլի»:

Գյուղացիները սրտաբաց իլլիչին պատմում եյին, վոր նրանք
համ անսասուններին են վոչնչացնում կամ թագնում, համ ել
ցանքսերը պակացնում կամ մշակությունը վատացնում:

Վուաքի վրա շարունակ դես ու դեն եյին գնում, հար-
ցումներ անում ու հարգանքով հեռանում: Իլլիչն ամեն բանի
միջամուխ եր լինում և ամեն հարցումին պատասխան տալիս:

Իլլիչն այս զրուցները 1920 թվի աշնանն ե արել, իսկ ձմեռն
արդեն նա խորհուրդների համագումար մտցրեց ու պաշտպանեց
գյուղական տնտեսությունն ամրապնդելու միջոցների դեկրե-
տի նախագիծը, վորտեղ պարզորեն ցուցադրվում ե այն միտքը,
թե անհրաժեշտ ե խրախուսել գյուղական այն սեփականատե-

րերին, վորոնք կանոնավոր ձևով վարում են իրենց տնտեսությունը և բարեխղճորին կատարում պետական պարտականությունները:

Ել ավելի հաստատակայությամբ այս հարցի վրա Իլիչը ծանրանում ե մարտ ամսին տեղի ունեցած (1921 թ.). Կուսակցական X համագումարում, վոլից հետո պարենմասնադրումը պարենհարկով փոխարինելու հարցը դրականապես վճռում ե:

Ընկեր լենինն ընդունակություն ուներ զգայուն և ուշադիր կերպով վերաբերվել գյուղացիների ու բանվորների կարիքներին, կարողանում եր ճիշտ կերպով ու ժամանակին տեսահամապնդությունը ու վաղորոք կանխել նրանց միջև ծագող տարածայնությունները:

Իզուր չեր, վոր Կաշինո գյուղում ասած իր ճառի մեջ նա ամենից շատ խոսում եր բանվորա գյուղացիական միության, բանվորա գյուղացիական մերձեցումի մասին:

Կաշինոյի գյուղացիները հասկացան իրենց առաջնորդին և հիմա, էեր հիշում են անցյալ վառ ժամանակը, նրանք ասում են. «Առաջ այսպես եր. հենց վոր իրար վրա եյին հավաշգում, սկսում եյին վիճարանել: Իսկ հիմա մենք դա այլևս վեճ չենք համարում, այլ քաղաքական զրույց»:

Անա հենց այս «զրույցները» միշտ ել թանգարին են յեղել ընկ. լենինի համար:

Գյուղացիների խոսքերից նա գյուղական տնտեսության վիճակի մասին շատ ավելի կատարյալ պատկերացում եր ստանում, քան թե, գուցե, շատ գրեթերից:

Իլյիչի համար կարեոր եր իմանալ, թե գյուղացին ինչպես ե ապրում, ինչպես ե զգուժ իրեն, ինչ ե ուզում:

Այդ չեր պատճառն արդյոք, վոր գյուղական լայն սեղանի շուրջը նստած ժամանակ կաշինոյի գյուղացիներին ուղղած նրա առաջին խոսքերը յեղան.

Այսինքն մասին. «Դուք այստեղ ինչպես եք ապրում, ինչպես եք ձեզ զգում, ինչ չափով ե պատերազմն ու հեղափոխությունը ձեր տնտեսության վրա ազդել»:

Յեվ կաշինոյի գյուղացիներն առանց բաշվելու ասում եյին

նրան, թե ինչպես 1918 թ. քուսպ են կերել, իսկ այժմ պարենի կողմից ավելի լավ են զգում իրենց, յեթե միայն վախ չլինի, թե կիսկեն այն ու մեկ ել՝ յեթե գործարանային ապրանքների պակասությունը չլինի:

Գյուղացիների մեջ վաղուց արդեն պահանջ եր առաջացել իրենց միտքն արտահայտելու այնպիսի մի մարդու մոտ, վորը կարողանար հասկանալ ու ոգնել նրանց:

Այդ չեր արդյոք պատճառը, վոր ելեկտրական կայարանը բացելուց առաջ նրանք այնպիս հուսահատված եյին, յերբ հույս չունեյին, թե կտեսնեն վոչ միայն ընկ. լենինին, այլև Մոսկայից լեկող վորեւ մեկին:

Կաշինոյի գյուղացիները լենինի դիմաց ամեն ինչ յերեան քերեցին՝ առանց վորեւ բան չափազանցնելու և նսեմացնելու:

Իլյիչի փորձող աչքերի դիմաց չեր ել կարելի ստել:

Իլյիչը նրանց քիչ եր պատասխանում, իսկ յեթե պատասխանում եր, ապա միքանի խոսքով՝ Նա ավելի շատ լսում եր ու հարցնում:

Միտինգում ասած իր կարձ խոսքը նա վերջացրեց մատնանշելով, թե անհրաժեշտ ե պահպանել բանվորների ու գյուղացիների սիությունը:

Այս միևնույն միտքն անցնում եր նաև նրա բոլոր պատասխանների միջոցով:

Յերբ նրան գյուղացիներն ասում եյին՝ «Տնտեսությունը թուլանում ե, վագիմիր իլյիչ, ապրանք չկա, վերջին շապիկներս ենք մաշում, խոտը պրծել ե» և այն,

Նրանց նա պատասխանում եր. «Այդ բանում վոչինչ չի կարելի անել»:

Այդպես ել պիտի պատահեր. Պատերազմը բերում ե նաև դժբախտություն:

Այնպիսի մի հեղափոխություն, ինչպիսին Հոկտեմբերյան հեղափոխությունն եր, առանց քայլայումի չեր կարող ծնվել:

Ինչու: Վորովինետե հեղափոխությունից առաջ տնտեսությունն առանց այն ել վատ եր, իսկ կալվածատերերն ու գործարանատերերը դժբախտությամբ եյին բաժանվում իրենց ունեցվածքից:

Ինչ բան կարող ելին, նրանք փչացըին ու թագցըին:

«Կտա ժամանակը, — ասում եր Իւյիշը կաշինոյի գյուղացին երին, — յերբ խորհրդային իշխանությունը կամքապնդվի, տընտեսությունը կկարգավորվի, ֆարբիկաներն ու գործարանները կուկսն աշխատել: Այս ժամանակ համ ապրանք կլինի, համ կաշին աշխատել: Այս ժամանակ համ ապրանք կլինի, համ կաշին աշխատել: Բայց դրա համար նախ և առաջ պիտի խոտ, համ ել շապիկ: Բայց դրա համար նախ և առաջ պիտի ամուր լինի բանվորա-գյուղացիական միությունը, վոչ թե խոսքով, այլ գործով: Այսպես եր ասում գյուղացիներին Իւյիշը:

Պարզ ու ներշնչող ձեռով:

Ցեկ այս գյուղացիները, վորոնց հետ զբուցել ե Իւյիշը՝ շատ լավ հիշում են այս բոլորը:

Ս. Լենինգրադսկի

(«Լենինը կաշինո գյուղի գյուղացիների միջեվ»).

ՄԵՐՁԵՑՈՒՄԸ ԳՈՐԾՆԱԿԱՆԱՊԵՍ.

Սերգեյ Կուրկովը յերկու անգամ գնաց կրեմլ ու յեղավ Լենինի գրասենյակում: Դեռ կաշինո գյուղում յեղած ժամանակ Լենինը նրան ասաց. «Ուրախ կլինեմ ձեզ ոգնելու»:

Իսկ կարեքը շատ հեռու չեր:

Միթե գյուղացիներն այն ժամանակ քիչ կարիքներ ունեին:

Բայց Սերգեյ Կուրկովն Իւյիշի մոտ վոչ թե անձնական գործով եր գնում, այլ Վոլոկոլամսկի գավառի ելեկտրիֆիկացիայի գործի համար ոգնություն ստանալու:

Գյուղացի Սերգեյ Կուրկովի առաջին գործն այն եր, վոր եր գյուղի համար դինամո-մեքենա ձեռք բերի:

Գյուղի ելեկտրիֆիկացիան Լեռ Կերությունը կաշինո գյուղում ելեկտրական կայարան կառուցելուց հետո, վորի բացմանը յեկել եր Իւյիշը, նոր անելիքի առաջ կանգնեց: Կաշինոյին մոտ գտնված յերեք գյուղերի գյու-

ղացիները հաճախ կաշինո եյին գալիս ե, տեսնելով ելեկտրական լուսի հարմարությունները, խնդրում եյին «Զարյա» ըն-

կերությանը, վորպեսզի իրենց խրճիթները նույնպես ելեկտրական լուս անցկացնի:

Ընդհանրապես ասած, հարեան զյուղացիները կաշինովի բարելինության մասին շատ շուառվ իմացան, իսկ Լենինի գուըստյան մասին այսպես եյին խօսում:

«Կաշինցիներն ամենքն ել կոմմունիստներ են դառեւ համար ել Լենինը նրանց մոտ չեկավ»:

Իսկ յերբ իմացան, վոր դա միանգաւախ այդպես չի, վոր Լենինը վորպես պարզ, առվորական մի ժարդ ե յեկել կաշինո, շատ զարմացան ու ափսոսացին:

«Ավսոս, վոր մենք ել չկարողացանք նրան տեսնել»:

«Զարյա» ընկերությունը լսեց իր հարեանների խնդիրը և ձեռնամուխ յեղավ շրջանային ելեկտրական կայարանի ապահով շենքի կառուցման գործին:

Ընկերության այս համաձայնության վրա գյուղերն ուրախացան ու համաձայնեցին մասնակցություն ցույց տալ աշխատանքին:

Այդ կայարանի համար անհրաժեշտ եր դինամո ձարեւ:

Սա յերկրորդ գործն եր, վորի համար Սերգեյ Կուրկովը իւյիշին պիտի զիմեւ:

Այդ ժամանակ առանց Իւյիշի ոգնության գժվար եր մի բան անել:

Դինամովի մասին գրեցին, ապագրեցին թղթեր, փակցըին ծրաբներ և ուղարկեցին զանազան հասցեներով:

Այդ թղթե աշխատանքի վրա շատ ուժ ու յեռանդ թափեց, ու վերջն ել դինամոն չստացվեց:

Միայն ամեն մի ժամկց հետո հաստանում եյին գործերի թղթակաները:

Վոլոկոլամսկ քաղաքի այսքան վոլտանոց, այսքան ուժանոց ելեկտրական կայարանի համար դինամո-մեքենա ձեռք բերելու մասին յեղած գործը վերցնելով, վոր նման եր մի «աստվածաշնչի», ու ժողովրդական անտեսության տեղական խորհրդից մանդատ ստանալով, վորի մեջ ասված եր, թե ընկ Լենինի բանավոր կարգադրության համաձայն գյուղի

գյուղացին Մոսկվա լե գործուղվում Փողկոմխորհ գնալու, Կուրկովը Մոսկվա մեկնեց: Միաժամանակ հետը վերցրեց նաև լուսանկարները՝ ընկ. Լենինին հանձնելու համար:

Գյուղացիները «Յես մոտեցա մուտքի դարպասին, պատմում կենաք մոռ ժողովը և Սերգեյ Կուրկովը, վորտեղ Կրեմլ մտնելու կոմիտեին»:

Ինձ լուկույն եեթ անցաթուղթ ավին, ու յես գիմեցի Ժողոմխորհի ընդունարատնը:

Ընդարձակ ընդունարատնում քիչ հաճախորդներ կային, կային ինձ պես մարդիկ: Ինձ առաջարկեցին նստել:

Յես դեռ թղթերը չեյի կարողացել ջոկջոշել, տերբ ինձ խնդրեցին վեր բարձրանալ, վորտեղ գտնվում եր Իլիչի գրասենյակը:

Դողդողացող ձեռքերով յես հանեցի վերարկուս, գլխարկս ու սրտատրոփ Իլիչի գրասենյակը գիմեցի:

Վոլոկոլամսկից Մոսկվա գնալիս դեռ ճանապարհին, ինչպես և այն ժամանակ, յերբ անցաթուղթ ստացա Կրեմլ մըտնելու և ընդառանուրանում նստեցի, յես Իլիչին պատկերացնում եի նստած լավ զարդարված ու հարուստ կահավորված սենյակում. յես մտքով տեսնում եյի Իլիչին նստած խորը բաղմոցին ու խորասուզված գրքերի մեջ:

Յես սկսում եյի յերկմտել, թե արդյոք Իլիչը կխօսի ինձ հետ:

Անհամբերությամբ սպասում եյի այդ ժամին: Իսկ յերբ յես Իլիչի գրասենյակ վոտք կոխեցի, իմ բոլոր յենթադրություններն ողը ցնդեցին, ու կասկածներս փարատվեցին:

Իլիչը խորը բազմոցին նստած չեր: Նա գանդաղությամբ քաղում եր գրասենյակում: Գրասենյակին ամենապարզ ձեր յեր:

Սև անպաճույժ կահ-կարասիք, մի գրասեղան, գրքերի հատորներ ու թերթերի կույտեր, — ահա այն հարուստ կահավորությունը, վոր յես պատկերացնում եյի իմ յերեակայության մեջ:

Յեզ յեթե նույնիսկ գրանք ել չլինելին, յես լուկույն կզգայի, վոր իմ առաջ նույն իլլիչն ե կանգնած, նույն ինքը, վոր յեկավ մեր գյուղը, խոսեց գյուղացիների հետ ու հորս հետ միասին միենույն ավտոմոբիլի մեջ նստած մեկնեց:

Հենց վոր յես ներս մտա, Իլիչը կանգ առավ, ձեռքս սեղմեց ու խնդրեց ինձ նստել:

Յերբ հայացքս առավ նրա կայծեր արձակող ու խորը հայացքին, յես ինձ կարծես թե առույգ ու զվարթ զգացի:

Այդպիսի բան ինձ հետ պատահել ե միայն սիրելի ու մոտիկ մարդու հանգիպելիս:

Իլլիչն ինձ հարցրեց:

— Ի՞նչ նորություն կա ձեր գյուղում: Ի՞նչպես ե կայարանը գործում:

Յես նրան պատմեցի, վոր մենք ուղում ենք արջանային ելեկտրական կայարան կառուցել: Մեզ հետ յերեք գյուղ ևս միանում են: Նրանք մեզ մոտ պատվիրակներ են ուղարկել ու խնդրել, վորպեսզի իրենց ևս միացնենք մեզ հետ:

Լենինը հետաքրքրվեց մեր նորությունով ու անչափ ուրախ լինեց: Ես կապահանությունը մի գյուղում այդքան հետեանք եր ե տվել:

— Շինեցեք, ընկեր, կազմակերպեք ու հասեք ձեր նպատակին, — ասում եր նա, — իսկ յես իմ կողմից կողնեմ ձեզ:

Հետո մենք անցանք Վոլոկոլամսկ քաղաքի համար զինամուեքենա ձեռք բերելու գործին:

Տեսնելով եմ «Աստվածաշունչ», վոր ամբողջ ժամանակը բռնած ունեյի ձեռքումս, Վլադիմիր Իլիչը խնդրեց ինձ թողնել այն իրեն մոտ:

— Թողեք այդ ինձ մոտ, մի վորոշ ժամանակից հետո անցեք ինձ մոտ, — ասաց նա:

Լեռինը յեզ Ապա յես հանձնեցի Իլիչին կաշինո գյուղի գյուղացիական գյուղացիների խնդրել:

Կաշինուում յերկու հատ ձեթհան գործարան կար, ու գյուղացիները խնդրում եյին Իլիչին, վորպեսզի նա կարգադի գործի դնեն գրանց:

Վլադիմիր Իլյիչն աչքի անցկացրեց այդ խնդիրն ու տուաց, վոր ինքն արգեն այդ մասին զբավոր կարգադրություն արել և ու հանձնել եւ քիչ առաջ իրեն մոտ յեկած Յարովոյեց զյուղի գյուղացի Դողովորսկուն՝ հանձնելու ըստ պատկանելույն:

Դրանից հետո Իլյիչի հետ յես քիչ խոսեցի: Ամբողջ ժամանակ շտապում եյի: Յես ամաշում եյի, վոր իմ զյուղացիական ծոտի բաներով կտրում եմ նրան իր վիթխարի ու կարեօր աշխատանքից:

Բայց Վլադիմիր Իլյիչի համար գյուղացիական կարիքները ծռտի բաներ չելին:

Գյուղացիական կարիքներին նա զուտ հայրական ուշադրությամբ եր վերաբերվում:

Դեպի Իլյիչը մեծ սիրո զգացքունքով ու կաշինոյի զյուղացիների փոխարեն հանգիստ սրտով դուրս յեկա յես գրասենյակից ու միենույն որն ևեթ մեկնեցի կաշինու:

Գյուղում հարցուփորձ անելով ինձ ուղղակի տանջեցին:

— Ի՞նչպես զնացիր, Իլյիչն ինչի՞ վրա յե նստում, ինչպես դիմավորեց, արդյոք մեղ հիշեց, արզյոք մեր ելեկտրիֆիկացիան նրան դուր յեկամվ և այն:

Յես պատմեցի նրանց բոլորը:

Այս տեղեկությունը, թե Իլյիչը բարեհաճ վերաբերմունք ցույց տվեց ձեթնան գործարանը բանալու նրանց ինդիքին, ամենքին ուրախացրեց:

Դեպի Իլյիչը հավատքն աճեց ու ամբացավ յուրաքանչյուրի մեջ:

«Նա ամեն ինչ տեսնում ե ու կարող ե անել և ինչպես լավ ե, այնպես ել անում ե»:

Ենթե յեզ Մի շաբաթից հետո յես կրկին Իլյիչի մոտ գյուղի ելեկտրի զնացի: Նա ինձ առաջվա պես հյուրընկալ կերպեկացիան: պով դիմավորեց, նստեցրեց ու շատ հարցուփորձ արեց գյուղացիների մասին:

Խոսակցության ժամանակ նա ինձ հիշատակեց, թե ինչքան հարմար բան ե ելեկտրական գութանը, և վոր մեղ մոտ հեշտությամբ կարելի յե ալդ գործադրել:

Վալոկումսկ քաղաքի համար դիմումունքնենա ձեռք բերելու խնդրի մասին նա տուաց:

— Յես արգեն զանգահարել եմ Ժողովրդական Տնտեսության Գլխավոր Խորհրդի նախագահ ընկ, Միկովին, վորպեսզի նա տեղեկումա, թե կա արդյոք պահանջված մեքենան: Հիմտ զեռ ինձ անհայտ ե, թե ինչ յելք ե ունեցել գործը, բոց հաջորդ անգամին, յերբ դուք կզաք, յես ձեղ վերջնականապէս կասեմ:

Յես հաղորդեցի Իլյիչին Պուտյատինո գյուղի դյուղացիների խնդրը՝ իրենց մոտ գալու ելեկտրական կայարանի բացմանը, վորի կառուցումը Կաշինոյի կայտրանի հետ միաժամանակ եր սկսվել բայց ինչ վոր պատճառով ուշացել եր:

Իլյիչը պատասխանեց, վոր հիմա չի կարող ասել կարող ե թե վոչ, իսկ հետո կտեսնի:

Այս խոսակցության վրա յել մենք բաժանվեցինք:

Յերկրորդ անգամ Մոսկվա գնացած ժամանակ Իլյիչին վերջին անգամն եր, վոր կենդանի տեսու:

Յերբ յես կարծ ժամանակամիջոցից հետո կրկին Մոսկվա գնացի ու Ժողովրդական մտա, Իլյիչին տեսնել շկարողացաւ:

Ինձ հանձնեցին ընկ. Ֆուտիւսայի գրությունը՝ հետեյալ բովանդակությամբ:

«Վլադիմիր Իլյիչը հետագայում հանձնարարում ե Ժողովրդական գործերի կոռավարիչ ընկ. Գորբունովին, վորը նույնպես կազ ունի Ժողովրդական Տնտեսության Գլխավոր Խորհրդի գիտական-տեխնիկական բաժնի հետ, — ձեր կարիքներին ամեն տեսակի աջակցություն ցույց տալ, վորովհետև ինքը հնարավորություն չունի այդ անելու համագումարին պատրաստվելու անշափ մեծ աշխատանքով զբաղված լինելու պատճառով»:

«Ելեկտրական կայտրանի (Պուտյատինո գյուղում) բացմանը, վորի մասին հաղորդեցիք, յեթե նարավորություն լինի, Վլադիմիր Իլյիչը կաշխատի ներկա լինելը»:

Այս գրությունն ստանալով վճռեցի իսկույն հեթ Գորբունովի մոտ գնալ:

Աստիճանների վրա պատահեցի Նազեժդաշ կոհոստանախնովնային, վորը գգվանքով հարցուփորձ արեց բոլոր դյուզացիների, մեր գործերի ու յենթադրելի անելիքների մասին:

Ն. Պ. Գորբունովս ինձ շատ լավ ընդունեց:

Իմ ձեռքը կրկին անդամ դինամոյի «Աստվածաշունչը» ընկավ, միայն այս անդամ մեզ համար թանգարին մակագրությամբ. «Վաղիմիր Իլլիչ Լենինի կարգադրության համաձայն խնդրում եմ բաց թողնել Վոլոկոլամսկ քաղաքի համար անհրաժեշտ մեքենան»:

Յես յենթադրեցի, վոր այս խոսքերը վերջ կդնեն իմ ճանապարհորդություններին, վերջ կտան յերկարածիզ գրագրություններին ու հնարավորություն կտան ինձ Վոլոկոլամսկ տանել վաղուց սպասվող դինամոն:

Մասնագետների Սակայն այդ բանում յես հուսախաբվեցի: Գործն սարտածը. անցավ միջվարչական հանձնաժողովի ձեռքը, անհայտության մեջ ընկավ:

Դանվեցին կասկածամիտ մարդիկ, ինժեներներ, վորոնք ասում եին, վոր նախքան մեքենան տալը պիտի ստուգել, թե ինչպիսի մեքենա յե հարկավոր, վորքան գոլտանոց ու վորքան ուժանոց:

Յես արդեն ողի մեջ զգացի նոր գրագրությունների ու հետախուզությունների, նոր արձանագրությունների հոտը և վրդոված տուն վերադարձա:

«Բաց թողնել» մակագրությամբ գործը մասց ուրիշների ձեռքում, և հույս ել չկար յետ ստանալու:

Այն, ինչ վոր ընկ. Լենինի համար հասարակ ու պարզ բան եր, պարզ չեր տարակուսող ինժեներների համար:

Դես ու զես յերկար չափչփելուց հետո յես դուրս հանեցի թագրած գործը: Տարակուսողներին պատասխանատվության կանչեցին, իսկ ինձ տվին Վոլոկոլամսկ քաղաքի ելեկտրական կաչարանի համար դինամո-մեքենան, վոր կառուցվող Կաշինովի շրջանային կաչարանի համար ավելի պակաս ուժանոց եր, ու դարձյալ 4 ուժանոց մի մոտոր:

Դյուզացիները մեծ ուրախությամբ դիմավորեցին վիճա-

ցող բեռնակիր ավտոմոբիլը, յերբ յես Վաղիմիր իԱհչի ոգնության շնորհիվ ստացած դինամոն ու մոտորը հետո վերցրած գյուղ մտա:

Դինամոն հիմա Յարովոլեց գյուղին և հանձնված, իսկ մոտորը մենք գործածում ենք կալսելու համար:

Մեր գյուղում մի ծերուկ, յերբ տեսավ պատավող թմբուկն ու իրար յետելից գուրս գցվող խրձերը, խաչակինքեց յերեսն ու անվանեց այդ անմաքուր ուժ:

Սակայն գրա փոխարեն մեր տղաներն արդեն շատ բան են իմանում ու բարակ յերկաթարերի վրա չեն զարմանում:

Մեր տղաները հիմա յել նույնիսկ հիշում են իԱհչին:

Մենք բոլորս հիշում ենք նրան, հիշում ենք նրա ուշադիր վերաբերմունքը դեպի մեզ: Իսկ յես մշտապես կպարծենամ, վոր իԱհչից բաժանվելու ժամանակ նրա դադաղի մոտ պատվագոր պահակ եմ կանգնել:

Գյուղացիները Հունվարի 22-ին յես Վոլոկոլամսկ բաղաքումն է կ լ. ե ն ի ն ի ե յ ի, յերբ իմացա լենինի մահը: Հիշեցի նրա մահը.

ամեն մի խոսքը, վոր ասել եր ինձ մոտ գնացածս ժամանակ, ու սրտիս վրա ծանր մի բան ընկավ:

Գավառական գործկոմի ու կուսակցության գավկոմի նիստում կաշինոյի գյուղացիներին թույլատրվեց պատվիրակներ ուղարկել Մոսկվա՝ իԱհչի դադաղի մոտ պատվագոր պահակ կանգնելու համար:

Մեր գյուղացիներն այդ վորոշան համար շատ շնորհակալ յեղան ու ընտրեցին ինձ պատվիրակ:

Մոսկվայում, Խորհուրդների Տանը, սպերգի հնչումների առակ յես ամբողջ որերով կանգնում եյի ու ամենքից յերկար նայում իմ սիրելի ուսուցչին:

Թաղման որը յես թույլատրվություն խնդրեցի վերցնել վորեն իր: Յես ուղում եյի ամերող ջապես՝ մտքով ու մարմնով ապրել հրաժեշտ ծանր ըոպեները:

Գյուղ վերադառնալով, յես ամեն ինչ պատմեցի գյուղացիներին, աչքից բաց չթողնելով վոչ մի աննշան բան, և նրանք, ինչպես և յես, անմում ելին Վաղիմիր իԱհչին դադաղի մեջ

պառկած, այս իլլիչին, վոր խոսակցել երնքանց հետ, իսկ հետո
նըանց մեծ ոգնություն ցույց տվել, վոր խոսքով, այլ զործով:

Հիմա, յերբ իլլիչը չկա ալիս, մենք ուզում ենք նրա հի-
շատակին Կաշինոյում ժողովրդական տուն շինել, վորի նախա-
դիմք Մոսկվայում արդեն հաստատվել եւ:

Բացի այդ, մենք ուզում ենք, վորպեսզի մեր դաշտերում
իւլիչի անգան արակտորը գործի:

«Զարյա» գյուղատնտեսական ընկերությունը, վոր դադա-
րեցրել եր իր աշխատանքը, կրկին կազմակերպվել եւ:

Այդ ընկերության մեջ յեղած բոլոր գյուղացիները նորից
ձեռնամուխ են լինում գյուղացիական տնտեսությունը բարե-
լավելու մեծ դործին:

«Գործեցեք, ընկերներ, կազմակերպեք ու կհանեք ձեր
նպատակին, — ասում եր իւլիչը, — իսկ յես իմ կողմից կողնեմ
ձեզ»:

Մենք գործում ենք, վաղիմիր իլլիչ, կազմակերպում ենք
և քո թօղած խորհուրդների ու ցուցմունքների ոգնությամբ
հասնում մեր նպատակին:

(Գյուղացի Ս. Կուրկովի
հիշողություններից)


Հ Ա Ր Յ Ե Բ

1. Ի՞նչ տվեց Լենինը գյուղացիությանը:
2. Ի՞նչպիսի վերաբերմունք ուներին գյուղացիները դեպի Լենինը մինչեւ
նրա մահը:
3. Ի՞նչ ապավորություն եր թողնում Լենինն իր ներկայությամբ դրու-
ղացիների վրա:
4. Ի՞նչպիս եր վարվում նա գյուղացիների և յերեխաների հետո:
5. Ի՞նչ ապրումներ ունեցան Լենինի ղագաղին պահակ կանգնած դրու-
ղացիները:
6. Ի՞նչ խոր ցավ զգաց գյուղացիությունը Լենինի մահից հետո:
7. Ի՞նչու յե գյուղացիությունն այլքան կապված Լենինի և նրա ան-
գան հետ:
8. Ի՞նչ ձեռվ ե արտահայտում գյուղացիությունը ձեզնում իր սերն
ու համականքը գեղի Լենինը:
9. Յերեխաների և աշակերտության վերաբերմունքը դեպի Լենինը:
10. Պատմել միքանի տպավորություններ Լենինին հանդիպելու, նրա
մահվան լուրի մասին:

ՀՀ Ազգային գրադարան



NL0174894





ԳԻՒԾ 20 ԿՈՊ.